ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԿԻՆՈՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով մշակույթի բնագավառում համագործակցության մասին կնքված երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերով,

նկատի ունենալով, որ կինոմատոգրաֆիական ստեղծագործությունները կոչված են արտակարգ կարեւոր դեր խաղալու ազգերի երկխոսության մեջ,

ճանաչելով, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի ստեղծելու կինոմատոգրաֆիական ստեղծագործություններ, որոնք արտացոլում են նրա սոցիալական եւ մշակութային առանձնահատկությունները, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը հաստատում են կինոմատոգրաֆիայի բնագավառում համագործակցելու իրենց ձգտումը՝ Համագործակցության մասնակից պետությունների ինքնիշխանության, իրավահավասարության սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետությունում գործող ազգային օրենսդրությունը:

Կողմերը ճանաչում են, որ կինոմատոգրաֆիայի բնագավառում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների պետական քաղաքականությունը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

ազգային կինոմատոգրաֆիան պահպանելու, օժանդակելու եւ զարգացնելու պետության պատասխանատվության,

կինոմատոգրաֆիան որպես մշակույթի առանձնահատուկ ոլորտ ճանաչելու, որի գոյության պարտադիր պայման է հանդիսանում զարգացած արտադրական, գիտական, տեխնիկական եւ տեղեկատվական հիմքի առկայությունը,

բնակչության լայն խավերի համար ազգային կինոարվեստի ստեղծագործությունների մատչելի դարձնող պայմանների ստեղծման,

ստեղծագործության ազատության, ձեռներեցության օժանդակության, ֆիլմերի արտադրության, վարձույթի եւ ցուցադրման մասնակիցների սոցիալական պաշտպանության,

միջազգային պայմանագրերի պահպանման:

Կողմերը անհրաժեշտ ջանքեր կներդնեն կինոարվեստը պահպանելու եւ զարգացնելու համար, այդ թվում՝ ֆիլմեր ստեղծող, վարձով տվող եւ հրապարակային ցուցադրում իրականացնող ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համար օրենսդրական կարգով հարկային եւ այլ արտոնություններ տրամադրելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերն իրենց պետությունների տարածքներում հեղինակային եւ հարակից իրավունքների պաշտպանության հարցերում կղեկավարվեն Հեղինակային իրավունքի մասին Բեռնի 1886 թվականի Կոնվենցիայում եւ Հեղինակային իրավունքի մասին 1952 թվականի համաշխարհային Կոնվենցիայում, ինչպես նաեւ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում հեղինակային եւ հարակից իրավունքների պաշտպանության մասին կնքված համաձայնագրերում ամրագրված սկզբունքներով:

Կողմերը փոխգործակցելով միմյանց հետ, ջանքեր կգործադրեն իրենց պետությունների տարածքներում հեղինակային եւ հարակից իրավունքների պաշտպանության հուսալի համակարգ ստեղծելու համար:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերն իրենց պետությունների ամբողջ տարածքում կօժանդակեն տարբեր ժանրի

ազգային ֆիլմերի առեւտրային եւ ոչ առեւտրային լայն փոխանակումներին եւ դրանց վարձույթին:

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրությունները իրենց տարածքներում կխրախուսեն ազգային եւ Համաձայնագրին միացած պետություններում ստեղծված կինոմատոգրաֆիական ստեղծագործությունների ցուցադրումը, կապահովեն Համաձայնագրի մասնակից պետությունների սահմաններով դրանց ազատ տեղաշարժը եւ մաքսային վճարների գանձումից ազատումը:

Կողմերը կնպաստեն նման ցուցադրման համար անհրաժեշտ վարչական ձեւականությունների առավելագույն հեշտացմանը եւ կրճատմանը:

Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային ֆիլմերին վարձույթի եւ հրապարակային ցուցադրման իրավունք տրամադրող փաստաթղթերը ճանաչվում են Համաձայնագրի մյուս մասնակից պետություններում, որպես ֆիլմերի տնօրինման եւ (կամ) տիրապետման իրավունքների հաստատում: Ընդ որում, Համաձայնագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրի համապատասխան պետական մարմինները իրավասու են սահմանել իրենց տարածքներում վարձույթի եւ հանդիսատեսների լսարանի սահմանափակման կարգը՝ հաշվի առնելով պետության ավանդույթները, սովորույթները եւ ազգային առանձնահատկությունները:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը կպահպանեն համագործակցությունը ազգային կինոմատոգրաֆիական կազմակերպությունների միջեւ ֆիլմերի արտադրության, վարձույթի եւ հրապարակային ցուցադրման, ինչպես նաեւ փոխադարձ արտադրական եւ սպասարկման ծառայություններ ցուցաբերելու բնագավառներում:

Կողմերը կխրախուսեն եւ կզարգացնեն կինոմատոգրաֆիայի բնագավառում ստեղծագործական համագործակցության տարբեր ձեւերը, կնպաստեն ժամանակակից կինոարվեստի զարգացմանը, կօժանդակեն կինոմշակույթը հարստացնող փորձարարական աշխատանքներին, կիրականացնեն տեղեկությունների փոխանակումներ, կանցկացնեն միջազգային փառատոներ եւ մրցույթներ:

ՀՈԴՎԱԾ 5

Կինո եւ տեսաֆիլմերի արտադրություն եւ վարձույթ իրականացնելու համար անհրաժեշտ ապրանքները Համաձայնագրի մասնակից պետությունների պետական սահմանները հատելիս չեն հարկվում մաքսային վճարներով, եթե առկա է կինոմատոգրաֆիայի ղեկավարման իրավասու պետական մարմնի կողմից տրված նրանց նշանակման հաստատումը՝ մաքսային սահմանները հատելիս ներկայացնելու համար:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը կհամագործակցեն կինոարտադրության, այդ թվում՝ կինոմատոգրաֆիայի կարիքների համար մասնագիտական կադրերի պատրաստման եւ վերապատրաստման ոլորտում,
կիրականացնեն կինոարտադրության համակարգի ուսումնական հաստատությունների սովորողների եւ դասախոսների փոխանակում:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը կհամագործակցեն կինոմատոգրաֆիական ժառանգության պահպանման եւ փոխադարձ օգտագործման, ազգային կինոարխիվների եւ կինոթանգարանների ձեւավորման բնագավառում:

ՀՈԴՎԱԾ 8

Ազգային կինոմատոգրաֆիայի զարգացման եւ համագործակցության խորացման նպատակով՝ Կողմերը օժանդակություն կցուցաբերեն միջազգային կինոմատոգրաֆիական կազմակերպությունների ստեղծմանը եւ գործունեությանը:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում կարող են ստեղծվել համատեղ հանձնաժողովներ եւ աշխատանքային խմբեր, փոխադարձ համագործակցության ուսումնասիրման եւ նախագծերի պատրաստման, ազգային կինոմատոգրաֆիական կազմակերպությունների համատեղ գործունեության օժանդակության, այլ հարցեր քննարկելու համար:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը չի բացառում կինոմատոգրաֆիայի բնագավառում երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրեր կնքելու Կողմերի հնարավորությունը:
Համաձայնագիրը բաց է նրա նպատակները եւ սկզբունքները ընդունող այլ շահագրգիռ պետությունների կողմից միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը կնքվում է երեք տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ երեք տարիների համար, եթե Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի գործողության հերթական ժամկետի ավարտից վեց ամիս առաջ չծանուցի ավանդապահին սույն Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ է մտնում պետությունների կողմից Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Կատարված է Ալմաթի քաղաքում 1995 թվականի փետրվարի 10-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:
Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1995 թվականի մայիսի 5-ից: